կան տեղում՝ Արագածի արևելեան ստորոտում՝ . . . ամբանոց ևս պատրաստում է *)։

Այս կերպ Պ. Որնակեցի, ամենքս պիտի աշխատենք Վեհափառի հետ՝ մեր Մայր Աթոռոյ անյարմարութիւնքը սակաւ առ սակաւ անհետացնել՝ և ոչ թողնել ևս առաւել ծանրանալու և ազգի միակ կեդրոնը և փրկութեան վայրը արհամարհելու։

Յետադիմութիւն էլ ի՞նչով կարող է վերանալ, եթէ ոչ՝ այնպիսի հաստատութիւններով էջմիածնում, որոնք պահանջեն փոքր իշատէ զարգացած անձանց ներկայութիւն ևն։

Ուրեմն ցանկանք յաջողութիւն այն բոլոր բարեկարգութեանց Էջմիածնում, որ այժմ յոյսեր է ծանուցանում՝ ամեն տեսնողի և կիսացողի մէջ։ Թև թիկունք լինինք մեր արդի Վեհափառի ջանքերին՝ և ոչ նոցա ջլատենք. . . . ։,,

Ի ՂՈՒՇՋԻԲԻԼԱԿ ԳԻՒՂ.

Այս տարի՝ անցեալ Յուլիս ամսեան՝ քանի մի գործոյ առթիւ հարկ եղև ինձ գնալ Ղուշչիբիլակ անուանեալ գիւղն, որ Վայոց ձոր (Դարալակեազ) գաւառի վերջին և լեռնաբնակ գիւղն է համարվում՝, որոյ մերձակայ բարձրաբերձ և շըղթայացած լեռները իւրեանց վրայի թաւ անտառներով զարդարուած և հովիտների դաշտավայր և սիզաւէտ կանաչութեամբ, զոգցես գեղեցիկ և ախորժ տեսարան մի և զբօսարան կներկայացնեն մարդոյ առաջև, նա մանաւանդ երբ այն լեռներից յորդառատ և քաղցրահամ՝ աղբերակները հետ զհետէ իջանելով և ի մի վայր գումարվելով կբաղկացնեն Արփայ անուանեալ գետն, որը իւր սրընթաց քայլերով հասանելով նոյն գիւղի դիմացն, այնուհետև անանցանելի է լինում՝ մի կողմէ միւսը՝ մանաւանդ գարնան ժամանակ երբ աւելի և մեծ քանակութեամբ ջուրը բարձրացած է իւր շրջանից, և այսու իսկ պատճառաւ թէ կողմանց բնակիչք և օտարակողման վրանարնակք և թէ տեղւոյն հանքային ջերը գնացող երթևեկք մեծ նեղութեամբ կկատարէին իւրեանց անցուդարձն։ Ուստի այս նեղութիւնները և դժուարութիւնները տեսնելով յիշեալ գիւղացի բարեպաշտումն Մարտիրոս անուն և կամելով դիւրութիւն տալ նոցա երթևեկութեանց՝ իւր սեպհականութենէն յուրմն հարիւր մանէթ ծախս դնելով այն գետի վրայ մի հոյակապ և քարաշէն կամուրջ կառուցած է, որոյ Աստուածահաճոյ բարեպաշտութիւնը արդարև արժանի է գովութեան, որ գիւղական շրջանի մէջ գտնուող հայազգէ այս յետին և պաղած ժամանակում՝ իւր ազգային մեծագործութեան և բարեպաշտութեան նշանը կտեսնուի, և սորա համար՝ ինչպէս կպատմեն՝ մտադրութիւն ունի նա և նոր քարաշէն եկեղեցի կառուցանել գիւղի մէջ, ըստ որում այժմեանն քայքայուած լինելով՝ անվայել է նորա մէջ Աստուածպաշտութիւն կատարել։ Ուրեմն բարեմաղթենք առ Աստուած, զի այսպիսի բարեպաշտ և հասարակութեան օգուտ զգացող անձինք պարգևէ մեր Ազգին, որ միշտ իւրեանց ազգօգուտ և բարեպաշտութեան գործերով փայլին մեր մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ԵՍԱՅԵԱՆՑ.

1874 ամի յունիսի 20։

ՎԱՍԵՐ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՆԱՆԵԱՆՑ ԵՒ ԻՒՐ ՆՈՒԻՐՆԵՐ՝

Ի 12-ն ամսոյս՝ Մայր Աթոռս Էջմիածին ուրախութեամբ հիւրասիրեց զվսեմափայլ Յովհաննէս Ս. Յոնանեանց՝ զայրն բազմաձանօթ և բարեհամբաւ, որ ընկերակցութեամբ իւր Մեծ. եղբօր Աղեքսանդրի Յոնանեանց, որդւոյն Ստեփանի և Ալէքսան փեսայն և այլոց երկուց անձանց՝ եկած էր յուխտ և յերկրպագութիւն Ս. Էջմիածնի և նուիրական Սրբութեանց որ ի սմա՝ և շրջակայ վանօրէից։ Սոյաւ կատարեց

(*) Ես լսեցի թէ մի հայ այժմ աշխատումէ Էվկալիպտի Դեղաբոյսի սերմեր բերել տալ Էջմիածին, որ Վեհափառի հրամանաւ ուշադրութիւն դարձուի այդ ծառի աճման յարմարութեանը Էջմիածնում. եթէ որ և իցէ կերպով յաջողին փորձերը, այն ժամանակ փոքր առ փոքր անտառ անկուի Էջմիածնայ շուրջը, որով գուցէ մեր Մայր Աթոռոյ պատուական կլիմայից վերանայ տենդը, ինչպէս վերացել է միւս մի քանի տենդոյին տեղերից (Իտալիայի մի երկու տեղում, և այլն)։

այնպիսի՛ մի պարտաւորութեան զդացումը, զոր ամենայն ճշմարիտ Հայ սրտին մէջ մշտավառ պէտք է ունենայ ի պանդխտութեան, եւ եթէ ծեռնհաս է՝ պարտական է անձամբ արտայայտել այն սէրը, զոր ունի առ Մայրն Հաւատոյ Ս. Էջմիածին. այն է՝ գործնականապէս կատարելով իւր ուխտը եւ գալով յայցելութիւն այս սուրբ կեդրոնիս, որ յաւէտ լինելոց է անլուծանելի շաղկապ կրօնական եւ բարոյական միութեան ամբողջ Հայ Ազգի՝ ուր եւ ցրուած լինի նա իւր վերջին քաղաքական կենաց վերջանալէն յետոյ: Այսպիսի պարտուց ճանաչումն հետզհետէ պէտք է զօրանայ, եթէ Ազգն կցանկայ որ Ս. Էջմիածին, իւր Ազգային Հոգեւոր Նշանակութիւնը անթերի կատարէ եւ իւր ազգաշահ ծեռնարկները անխափան իրագործէ:

Եւ ահա այս առթիւ Վսեմափայլ Յովհաննէս Յոնանեանցի շրջանկոյտ տեսութենէն չկրցան ծածկուիլ այն բարեմիտ ծեռնարկներն ու նորահաստատ բարեկարգութիւնք՝ զորս մեր Վեհափառ Հայրապետ ընդ միշտ ջանացած է ի գործ դնել Ս. Աթոռոյս պայծառութեան, ներկայ եւ ապագայ Մխիթարեանից մտաւոր եւ բարոյական յառաջադիմութեան նկատմամբ, ուստի ի նշան իւր խորին համակրութեան՝ եւ իբրեւ յայտարար իւր ազգային պարտքերը քաջ ճանաչելոյն՝ ի 15-ն ամսոյս նախ քան զմեկնիլն ի Ս. Էջմիածնէ՝ ուղղեց հետեւեալ գրութիւնը առ Վեհ. Հայրապետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ·

Բազմակարօտ սիրով և հոգեռանդն անձկանօք եկեալ գոլով իմ յուխտ և յերկրպագութիւն մեծահռչակ վանից Ս. Էջմիածնի և ամենայն նուիրական սուրբ տեղեաց՝ որք շուրջ զսովաւ գտանին, ահաւորժալիր իմն ցնծութեամբ սրտի նկատեալ տեսի, զի նորանոր բարեկարգութեանց արդիւնք յայտ յանդիման ելանեն յամենայն քայլափոխս և վանքն գնոր իմն զգեցեալ է և զգենու կերպարան վայելչութեան և կենդանութեան եթէ նորակառոյց շինուածոց յաւելմամբ և եթէ արդէն եղելոցն բարեխնամ նորոգութեամբք:

Ս. Այսոսիկ գովանի արարս մեծագործութեանց համարելով անուրանալի արգասիս ազգասիրական փութոյ Վեհիդ և քաղցրագին խնամոց, որովք ջանս ի ջանս յաւելուք զԳերագահ Աթոռն Ս. Էջմիածնի օր քան զօր փառաւոր և պատկառելի կացուցանել յաչս մերայնոց և օտարաց և ըստ հոգեւոր նշանակութեանն աղբերացուցանել ի սմանէ յընդհանուրս Հայաստան աշխարհի և յամենայն տեղիս, յորս ցրուեալ են պանդուխտ Հայկազունք, զհոգեւոր դաստիարակութեան ըզյորդառատ ուղիս ընդ ձեռն Նորակառոյց Հեմարանի և զբարոյական կրթութեան զկենցաղօգուտ արդիւնս ընդ ձեռն Բարբատ պատուական Ամնագրոյ, թողից ասել զայլ բարեվաստակ ձեռնարկս Վեհիդ, յորոց սակի են խորանաշէն Թանգարանն, նորատունկ անտառն և այլ բազմատեսակ սիրագործութիւնք, որոց նպատակն է պայծառութիւն վանից Ս. Էջմիածնի և բարօրութիւն Մխիթարեից սրին. սոցին աղագաւ կամ եղև ինձ ի հաւաստիս խորին յարգանաց իմոց առ ամենայն ձեռնարկս Վեհիդ և իբրև նըպաստ դուզնաքեայ առ անվթար իրագործութիւն ազգաշահ նպատակաց ձերոց նուիրել նախ՝ ռուպլիս արծաթոյ Եր+ հաղար Նորակառոյց Հեմարանի սակս կրթելոյ ի նմա տոկոսեօք այնր գումարին զորդեղիր մի, երկրորդ՝ Եր+ հաղար ռուպլիս ի վերանորոգութիւն սրբոյ Տաճարին Էջմիածնի, որում կարօտի մեծապէս, և երրորդ՝ զաւեալն ինձ փոխարինաբար ՀՇԵՆԴ հաղար ՎԵՅ հարիւր յԻՈՈՆ և ՀՐԱ ռուպլիս և ՀԱ-ԸՆՈՈՆ ՈՐՆ կոպէկս ի զինս եռատեսակ թղթոց, միոյ փոքրա-

*դիր արագատպի և տպարանական մամլոյ**)\` *բաշխել յօգուտ Տպարանին և յարգելնաւոր յառաջադիմութիւն նորին:*

Նախայոյս գոլով, զի Վեհափառ Տէրդ իմ զգումարան զայնոսիկ՝ զորս նուիրեմ յարդար վաստակոց իմոց, ընկալցի ի հաճոյս իւր և համարեսցի առհաւատչեայ մեծի համակրութեան իմոյ առ ամենայն մեծագործութիւնս իւր, որովք աճսի զԱթոռն զարդարեալ և փայլեցուցեալ, մնամ

Վեհափառ Տէրութեանդ

Ընծախոսական ծառայ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆՑ.

Ի 15 Հոկտեմբերի 1874 ամի,

Ի Ս. Էջմիածին է Վաղարշապատ։

Վսեմափայլ Յովնանեանցն սոյա անշուշտ կցուցանէ թէ՝ ո՛րչափ լաւ եւ հիմնովին կճանչնայ իւր ազգին ներկայ դարուս մէջ ունեցած մտաւոր եւ բարոյական պահանջները եւ շատ ազգայիններէն աւելի հասուն եւ նուրբ հեռատեսութեամբ զգացած է Ս. Աթոռոյս այն հոգեւոր մեծ նշանակութիւնը, զոր ունեցած է Սա ի հնումն եւ զոր ունենալոց է ի ներկայումս եւ յաւէտ Ազգիս կրօնական զարգացման եւ բարոյական դաստիարակութեան վերաբերութեամբ. նորա բարեպաշտութեան եւ ազգասիրութեան այս նշանաւոր քայլը, — որ թէպէտ առաջինն չէ ի ցոյց ազգի վերայ ունեցած սիրոյն, — փոքր խրախոյս չէ մեր Վեհափառ Հայրապետի համար եւս, որ իւր գործառնութիւններն եւ ձեռնարկներն յաջողութեամբ պսակուած կհամարի այն ժամանակ՝ երբ այսպիսի երեւելի ազգայնոց բարոյական ձեռնտուութեանց կըհանդիպի եւ կմխիթարի այն յուսով թէ՝ յարատեւ եւ արդիւնաւոր կմնան նոքա այսպիսի բարեսէր զգացմանց մէջ եւ իւրեանց բարեգործութեանց կոթողները կանգնելով առ դուրս նորոյս Սիօնի՝ կ յաւելուն Ս. Աթոռոյս պարծանքը, կխրախուսեն վաստակողաց սրտերն եւ հոգին՝ եւ անմահ յիշատակ անուան կժառանգեն ազգային յիշատակարանաց մէջ:

Սիրելի՛ ընթերցող, քո Մայր Էջմիածին՝ Ազգասէր Յովնանեանցի բազմարդիւն յիշատակները արձանագրելով իւր ազգասէր որդւոց ցուցակին մէջ, անտարակոյս է, որ դու եւս նորա փառաւոր անունը սիրով տպաւորեցիր մտացդ ու սրտիդ մէջ, որպէս զի բաւ քո կարեաց աշխատիս առ Ս. Էջմիածին ունեցած պարտքերդ ճանաչել եւ եռանդնալից փութով կատարել:

«Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին»:

ՀՐԿԻԶՈՒԹԻՒՆ Ի ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ներկայ թուղթս մէջ ակամայ և վիշտ ի սիրտ պարտաւորուած եմք նորաբաց Ճեմարանի վերայ պատահած տխրալից մի ծանր դժբաղդութիւնը դուժելոյ, յորմէ անշուշտ իւրաքանչիւր Հայ պիտի վշտանայ և տրտմի:

Ամսոյս 16-ն էր՝ Չորեքշաբթի օր՝ մինչ առաւօտեան Ասիական ժամ իբր 2—3 ի միջոցներում՝ Ճեմարանի մէջ աշակերտք

(*) Ահաւասիկ առանձին կհրատարակեմք Պ. Յովնանեանցի Տըպարանիս ի նուէր տուած պարագայից հաշիւը եւ ցուցակը.

		ր.	կ.
1,	Վասն 150 պուտի (օղմայ) տպարանական թղթոց (ի թ. 18) իւրաքանչիւր պուտին 3 ր. 40 կ. . . .	510	
2,	Վասն 200 պուտի թղթոց (ի թ. 20) իւրաքանչիւր պուտին 3 ր. 30 կ.	660	
3,	Վասն 630 պուտի թղթոց (ի թ. 24) իւրաքանչիւր պուտին 3 ր. 10 կ.	1953	
4,	Վասն այլ եւ այլ ծախուց (մոմաշորի, թաղիքի, խալիի, չուանի, կարեկաթեղի եւյն) ի պէտս ճակից թղթոց. . .	196	88
5,	Վասն ճանապարհածախուց 640 փթ. թըղթոց ի Մոսկվայէ ցՏփխիս, իւրաքանչիւր փութն 1 ր. 80 կ. . .	1152	
6,	Վասն միոյ միջակադիր մամլոյ (495 րբ.) եւ փոքրիկ արագատպի (688 ր.) ընդ ծախուցն ճանապարհի ի Գերլինէ ցՍ. Էջմիածին, եւ արագատպին ի Լոնդօնէ ցՓօթի, համայնն իմիասին. . .	1183	
	Ամբողջ գումարն	5654	88